

10366

ՀՍԽՌ Ա.Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱԿԱՆ  
ԳՐԱԳԱՐԱՆ

ԳՐԱԳԱՐԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԲԱՃԻՆ

ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԱԶԽԱՏԱՆՔԸ ՍՄԿՊ  
XXI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

(Մեթոդական նամակ)

021

Շ-16

ԵՐԵՎԱՆ

1958

22 MAY 2009

ՀՍՍՌ Ա.Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱԿԱՆ  
ԳՐԱԴԱՐԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆԱԳԵՏԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԱԶԽԱՏԱՆՔԸ ՍՄԿՊ  
XXI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

(Մեթոդական նամակ)

ԵՐԵՎԱՆ

1958

12 JUL 2013

Կաղնեց՝ Ալ. Շահազիզյան  
Խմբագրեց՝ Ա. Թիրաբյան

ГОСУДАРСТВЕННАЯ РЕСПУБЛИКАНСКАЯ БИБЛИОТЕКА  
АРМ. ССР им. А.Т. МЯСНИКЯНА  
Методический отдел библиотковедения

Работа библиотек накануне  
XXI съезда КПСС  
(Методическое письмо)

Составитель: А. П. ШАХАЗИЗЯН  
Редактор: А. М. ТИРАБЯН  
(На Армянском языке)  
ЕРЕВАН—1958

Տեխն. խմբագիր և  
կոնտրոլ սրբագրիչ՝ Կ. Պետրոսյան

2007

ՀՖ 08946 Գառգեր 715 Տպարանակ 1500

Հանձնված է արտագրության, 1958 թ.:  
Ստորագրված է արտագրության, 1958 թ.:  
Տպագր. 1 մաս հրատարակչական մասով:



Հայպետունամանկագրության, սպարան, նեկան Տերյան Ժ. № 127

1629-2004

ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍՄԿՊ XXI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ  
ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

Քաղաքական ու աշխատանքային աննախընթաց ոգևորությամբ է համակված մեր մեծ հաջրենիքը: Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի 1958 թվականի նոյեմբերի 12-ին տեղի ունեցած պլենումը քննության առաջ է հանվում ՍՄԿՊ XXI համագումարին ընկեր Ն. Ս. Խրուշչովի՝ «ՍՍՌՄ ժողովրդական անտեսության զարգացման 1959—1965 թվականների կոնտրոլ թվերը» ղեկուցման թեզիսների նախագծին և «Կյանքի հետ դպրոցի կապն ամրապնդելու և երկրում ժողովրդական կրթության սխառեմի հետագա զարգացման մասին» ՍՄԿՊ Կենտկոմի և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի թեզիսների նախագծին:

ՍՄԿՊ XX համագումարից հետո անցած ժամանակաշրջանում Սովետական Միության օտարաշխատական էկոնոմիկան, գիտությունը և կուլտուրան մի նոր հսկայական առաջընթաց քայլ կատարեցին: Անշեղորեն բարձրանում է աշխատավորների բարեկեցությունը: Երկրի ժողովրդական անտեսության զարգացման վերաբերյալ համագումարի ընդունած որոշումները հաջողությամբ կատարվում են:

Ներկայումս Սովետական Միությունը արդյունաբերական արտադրանքի արտադրությամբ ետ է թողել Նվրոպայի կապիտալիստական բոլոր երկրները և խնդիր է դնում հասնել Ամերիկայի Միացյալ Նահանգներին: Սովետական Միությունը ԱՄՆ-ից առաջ է անցնում ինչպես երկաթաբարի, ածխի, նավթի, չուգունի, պողպատի, ցեմենտի, բրդե գործվածքների արտադրության աճման տեմպերով, աչնպես էլ արտադրության աճմամբ: Էրեկտրաէներգիայի արտադրությամբ, գազի հանույթով և կոշիկի արտադրությամբ

ՍՍՌՄ-ն ԱՄՆ-ից անցել է աճման տեմպերով, բայց դեռ նրան զիջում է այդ արտադրանքի ամենամյա բացարձակ աճմամբ: Մենք առաջ ենք շարժվում զգալիորեն ավելի արագ, քան կապիտալիստական երկրները: Քառասուն տարում՝ 1918 թվականից մինչև 1957 թվականը ՍՍՌՄ-ում արդյունաբերական արտադրանքի աճման տարեկան միջին տեմպը կազմել է 10 տոկոս, ԱՄՆ-ում՝ 3,2 տոկոս, Անգլիայում՝ 1,9, Ֆրանսիայում՝ 3,2 տոկոս:

Տնտեսության սոցիալիստական սիստեմի առավելությունները, որոնք ապահովում են մեր էկոնոմիկայի պլանաչափ և արագ զարգացումը, տեմպերի բնագավառում մեր գերազանցությունը ճշմարիտ գրավական են, որ մոտ ապագայում ՍՍՌՄ-ն ԱՄՆ-ին կգերազանցի արդյունաբերական արտադրության մակարդակով:

Գյուղատնտեսության շեշտակի վերելքի ուղղությամբ պարտիայի ձեռնարկած միջոցառումների շնորհիվ հսկայական հաջողություններ ձեռք բերվեցին գյուղատնտեսական արտադրության գործում: Գյուղատնտեսության հետագա զարգացման այն լայն ծրագիրը, որ մշակել էին ՍՄԿՊ Կենտկոմի Սեպտեմբերյան պլանումը (1953 թվական), ՍՄԿՊ XX համագումարը և պարտիայի Կենտկոմի հաջորդ պլենումները, հաստատականորեն կենսագործվում և իր հիանալի պտուղներն է տալիս:

Արդեն անցյալ տարի Սովետական Միությունը գյուղատնտեսության արտադրության մի շարք միջերջերով մոտեցավ ԱՄՆ-ի գյուղատնտեսական արտադրության ծավալին, իսկ մի քանի միջերջերով արդեն հասել և նույնիսկ գերազանցել է ԱՄՆ-ում այդ միջերջերի արտադրության ներկայիս մակարդակը:

Ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի զարգացման աչքի ընկնող հաջողությունների հիման վրա զգալիորեն աճել է ՍՍՌՄ ազգային եկամուտը, անշեղորեն բարձրանում է աշխատավորների բարեկեցությունը, բուռն կերպով զարգանում են սովետական գիտությունը և կուլտուրան: Ընդհանուր ձանաչում ստացան և ամբողջ առաջադեմ մարդկության իսկական հիացմունքը առաջ բերեցին սովետական գիտնականների, մեր ամբողջ ժողովրդի կատարած սխրագործությունները:

Սովետական ժողովուրդը իրավամբ հպարտանում է վերջին ժամանակներում մեր երկրի ձեռք բերած հաղթանակներով: Այդ պատմական հաղթանակները պարտիայի, նրա լենինյան Կենտ-

րոնական Կոմիտեի իմաստուն ղեկավարության արդյունքն են, հարազատ կոմունիստական պարտիայի շուրջը սերտորեն համախոլմբված՝ բազմազգ Սովետական Միության բոլոր ժողովուրդների հերոսական աշխատանքի արդյունքը:

ՍՄԿՊ XX համագումարում նշվեց, որ անհրաժեշտ է մշակել մեր երկրի էկոնոմիկայի ու կուլտուրայի զարգացման մի քանի հնգամյակի հեռանկարային պլանը: Մի շարք կարևորագույն ճյուղերի վերաբերյալ այդ պլանի որոշ ցուցանիշների նախնական նշումները, որոնց վրա աշխատում են մեր պլանային օրգանները, ցույց են տալիս, թե այժմ մեր երկիրը ինչպիսի վիթխարի առաջընթաց քայլ կարող է անել իր ժողովրդական տնտեսության զարգացման գործում: Առաջիկա համագումարը նոր, էլ ավելի պայծառ հեռանկարներ է բացում մեր երկրի հզոր առաջընթացի համար:

Այժմ երբ մեր մեծ Հայրենիքում պարտիայի XXI համագումարի պատվին սոցիալիստական լայն մրցություն է ծավալվել, սովետական մարդիկ ձգտում են աշխատանքային նոր սխրագործություններով նշանավորել հարազատ պարտիայի համագումարը: Գրադարանների և կուլտուրայի մեր մյուս օբյեկտների խնդիրն է՝ ամեն կերպ աջակցել այդ մրցության լայն ծավալմանը, պրոպագանդել նորն ու առաջավորը: Անցկացնել զեկուցումներ, զրույցներ ու բարձրաձայն ընթերցանություններ, կազմակերպել զրբային ցուցահանդեսներ, առաջավոր փորձի փոխանակման ու հանդիպման երեկոներ: Աշխատանքի բոլոր փորձված միջոցներով պետք է լայնորեն պրոպագանդել սովետական ժողովրդի, մեր ուսպուրիկայի ձեռք բերած նվաճումները:

Համոզիչ փաստերով պետք է ցույց տալ Սովետական Միության և կապիտալիստական երկրների միջև գոյություն ունեցող կտրուկ մրցության մեջ ՍՍՌՄ-ի ունեցած բացարձակ գերազանցությունը: ՍՄԿՊ XX համագումարից հետո անցած ժամանակամիջոցում կոմունիստական պարտիայի իմաստուն ղեկավարության շնորհիվ սոցիալիստական տնտեսությունն ապրեց աննախընթաց զարգացում ու ծաղկում: XX համագումարից հետո անցած առաջին երկու տարում այդ արդյունաբերության արտադրանքը ՍՍՌՄ-ում ավելացել է 22 տոկոսով: Արագ քայլերով են ընթանում տեմպերը հատկապես ծանր արդյունաբերության մեջ:

Տարեց-տարի երկրում աճում է ցորենի համախառն և ապրան-

քային արտադրությունը, գնալով ավելի է բարձրանում գյուղատնտեսության տեխնիկական սարքավորումը: Յուրացվեցին 36 միլիոն հեկտար նոր հողեր: Արդյունավետ կերպով աճում է անասնապահությունը: Արտադրական ուժերի բուռն ծաղկման շնորհիվ հաջողությամբ վճարվում է ՍՍՌՄ տնտեսական խնդիրը ապահովելու հնարավորությունը՝ նյութական բարիքների առատություն ստեղծելու համար: Ծնորհիվ պարտիայի անդուլ հոգատարության, անշեղորեն բարձրանում է ժողովրդի նյութական բարեկեցությունը: Աճում է բանվորների և ծառայողների սեռի աշխատավարձը, կուտնտեսականների եկամուտները: Ձեռնարկվում են խոշոր միջոցառումներ աշխատանքի պայմաններն ու կենցաղը բարելավելու, աշխատավորության առողջությունը պահպանելու ուղղությամբ: Վիթխարի թափ ստացավ բնակարանային շինարարությունը:

Բուռն կերպով զարգացել է սովետական գիտությունն ու կուլտուրան: Մեր գիտնականները, ինչպես տեսանք, նոր դարագլուխ քաղցի տիկները նվաճելու ուղղությամբ: Սովետական գիտության ու կուլտուրայի հետագա զարգացման համար մեծ նշանակություն ունեցավ ընկեր խրուշչովի «Ժողովրդի կյանքի հետ գրականության ու արվեստի սերտ կապի համար» ՍՄԿՊ Կենտկոմում հրավիրված գրողների խորհրդակցությունում ունեցած ելույթը:

Կոմունիստական պարտիայի իմաստուն արտաքին քաղաքականության շնորհիվ մեծապես աճել է մեր Հայրենիքի միջազգային հեղինակությունը: Այժմ սովետական ողջ ժողովուրդը, որը սոցիալիստական շինարարության բնագավառում հասել է համաշխարհային պատմական հաղթանակների, պատրաստվում է արժանավայել կերպով գիմավորելու ՍՄԿՊ XXI համագումարը, որը մեծ հետաքննարկության ձեռնարկությունների և կառույցների բանվորները, ծառայողներն ու շինարարները, տրանսպորտի, կապի և գյուղատնտեսության աշխատողները աշխատանքային նոր հաջողություններով են գիմավորում ՍՄԿՊ XXI և Հայաստանի կոմպարտիայի XX համագումարները:

Այս պայմաններում արտակարգ կերպով մեծանում է գրողարանների և մյուս կուլտուր-լուսավորական հիմնարկների դերը և նրանց պատասխանատվությունը, որպես պրոպագանդիստների, որոնք պետք է ցույց տան կոմունիստական շինարարության գոր-

ծում Սովետական Միության ձեռք բերած նվաճումները: Գիտակցելով իրենց առև ծառայած խնդիրների կարևորությունը, գրողարանները նույնպես պատրաստվում են արժանավայել կերպով գիմավորել ՍՄԿՊ XXI համագումարը:

Կատարելով պարտիայի XX համագումարի ցուցումները, շատ գրողարաններ դարձել են պարտիական կազմակերպությունների քաղ. մասնաճյուղի և կուլտուր-լուսավորական աշխատանքի իսկական կենտրոններ և ակտիվորեն օգնում են այն որոշումների ու խնդիրների հաջող կենսագործմանը, որոնք վերաբերում են իրենց շրջանի, քաղաքի ու ռեսպուբլիկայի կյանքին, արդյունաբերության, գյուղատնտեսության հետագա առաջընթացին, կուլտուրական շինարարությունը և այլն: Այստեղ նրանք ամենատարբեր հարցերի շուրջը կազմակերպում են ղեկուցումներ ու դրույցներ, ցուցահանդեսներ, գրքի անսովություններ և ուրիշ շատ միջոցառումներ, որոնք քնդյալնում են մասնակիցների աշխարհայացքը, բարձրացնում կրթական մակարդակը, մարդկանց դաստիարակում կոմունիստական բարոյականության քարձր սկզբունքներով: Այդ ժամանակամիջոցում զգալիորեն ավելացել և բարելավվել են գրքային ֆոնդերը, լավացել է ընթերցողների սպասարկման գործը: Գիրքը լայնորեն մտել է ժողովրդի մեջ: Շատ բանվորներ և կուլտնտեսականներ ավելի շատ են կարդում հասարակական-քաղաքական, դիտաբնագիտական գրքեր:

Առաջավոր փորձի փոխանակման ուղղությամբ կոնկրետ նախաձեռնություն են հանդես բերել մեր ռեսպուբլիկայի մի շարք գրողարաններ, ինչպես օրինակ՝ Երևանի, Լենինականի, Գորիսի քաղաքային, Ղաշաղանի, Ժգանովի, Ղրղիի գյուղական, Շամշադինի, Ստեփանավանի, Մարտունու շրջանային գրողարանները, որոնք վերջին գրողարանային ստուգատեսի ժամանակ պատշաճ տեղ գրավեցին և հասարակության ուշադրությանն արժանացան:

Առաջավոր փորձի ընդհանրացումը կարևոր խնդիր է մեր գրողարանային աշխատողների համար: Գլխավորն այն է, որ օպերատիվ կերպով մասնաներին հասցվի, թե ինչպես պետք է լավ նախապատրաստվել ՍՄԿՊ XXI համագումարին, բացատրել նրա միջազգային նշանակությունը, գրականության միջոցով ցույց տալ մեր երկրի մեծագույն հաջողությունները, որ ձեռք է բերվել պարտիայի ղեկավարությամբ: Լայնորեն պրոպագանդել արդյունաբե-

րության և գյուղատնտեսութեան նորարարների փորձը: Այս խնդիրները պետք է իրագործել գրադարանային աշխատանքի բոլոր միջոցներով:

ՍՄԿՊ XXI համագումարի նախապատրաստման այս շրջանում շատ ավելի է բարձրանում սովետական մարդկանց հետաքրքրությունը դեպի մարքսիզմ-լենինիզմի թեորիան, դրա հետևանքով աճում է մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրների աշխատությունները գրադարանի կողմից ակտիվ կերպով պրոպագանդելու պահանջը:

Առանձնակի ուշադրություն պետք է նվիրել Լենինի այն աշխատություններին, որոնք նվիրված են սոցիալիստական շինարարության հարցերին: Հարկավոր է ընթերցողներին տալ գրականության հանձնարարական ցանկեր նվիրված Վ. Ի. Լենինի կյանքին ու գործունեությանը: Այդ նպատակով պետք է օգտագործել ՍՍՌՄ Վ. Ի. Լենինի անվան Պետական գրադարանի, ՀՍՍՌ Ալ. Մյասնիկյանի անվան Պետական ռեսպուբլիկական գրադարանի և այլ գրադարանների կողմից հրատարակված հանձնարարական գրականության ցանկերն ու բիրիոգրաֆիաները:

Պրոպագանդայի ընթացքում մեծ տեղ պետք է հատկացնել պարտիայի ու կառավարության որոշումներին, որոնք ուղղված են մեր երկրի էկոնոմիկայի ու կուլտուրայի հետագա վերելքին, Կոմունիստական պարտիայի դերին, տրայես սովետական հասարակության ղեկավար և ուղղություն տվող ուժի:

Պարտիայի ու կառավարության այդ փաստաթղթերը, Սովետական պետության ղեկավարների ձառերն ու ելույթները պետք է ամենուրեք հանձնարարվեն ընթերցողներին և անհատական գրույցի նյութ զատնան արտնետնետում և տեղ գտնեն այդ թեմայի շուրջը կազմակերպված ցուցահանդեսներում:

ՍՄԿՊ Կենտկոմի և Սովետական կառավարության ընդունած որոշումները XX և XXI համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում բնութագրվում են պարտիայի ու պետության վիթխարի ստեղծագործական աշխատանքով, այդ նյութերը պետք է հավաքել մի առանձին արկղում՝ «Մեզ պարտիան տալում է դեպի նորանոր հաղթանակներ» խորագրի տակ, ընթերցողներին թողնելով գրքի ազատ ընտրությունը:

Մեծ են մեր երկրի հաջողությունները կոմունիզմի կառուցման գործում, արդյունաբերության, գյուղատնտեսության, գիտության

ու կուլտուրայի ասպարեզում: Այդ ուղղությամբ կարելի է կազմել հանձնարարական գրականության ցանկեր ու ցուցահանդեսներ ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում՝ ձեռք բերած տեխնիկական վիթխարի նվաճումների, ծանր արդյունաբերության, սև ու գունավոր մետաղների ձեռք բերած աճի, քիմիական, ածխային, նավթի, գազի արդյունաբերության, ՍՍՌՄ-ի էլեկտրիֆիկացիայի բարձր տեմպերի և այլնի մասին: Այս նյութերի շուրջը շուրջ պրոպագանդա պետք է ծավալել բոլոր գրադարաններում և առաջին հերթին հատկապես քաղաքային, մասսայական ու շրջանային այն գրադարաններում, որոնք գտնվում են արդյունաբերական շրջաններում:

Գյուղական գրադարանները մեծ դեր ունեն այն գրքերի պրոպագանդան խնդրում, որոնք պատմում են, թե ինչպես են գյուղատնտեսության աշխատողները գերակատարում XX համագումարի որոշումները, պարտիայի 1958 թվականի Փետրվարյան և Հունվարյան պլենումների որոշումները, հացի համախառն և ապրանքային արտադրության ավելացման, շաքարի ճակնդեղի, բամբակի հումքի, եգիպտացորենի բերքատվությունը բարձրացնելու, բնակչության մեկ շնչին ընկնող կաթի, մսի, յուղի արտադրությամբ ԱՄՆ-ին հասնելու ուղղությամբ: Պետք է ցույց տալ, թե ինչպես է ավելացել կոլտնտեսականների եկամուտներն ու գյուղատնտեսական մթերքների արտադրությունը: Այդ առթիվ հարուստ նյութեր կարելի է գտնել «Հայաստանի կոլտնտեսական» ամսագրում և մյուս պարբերականների էջերում:

Ընդհանուր վերելքի պայմաններում է սովետական ժողովուրդը դիմալորում պարտիայի արտահերթ XXI համագումարը: Գրադարանները կոչված են օգնելու արդյունաբերության և գյուղատնտեսության աշխատողներին, կատարելագործելու աշխատանքի և արտադրության մեթոդները, արմատավորելու նորագույն տեխնիկան արտադրության մեջ: Դրա հետ կապված, մեծ նշանակություն ունի առաջավոր ձեռնարկությունների ու կոլտնտեսությունների փորձը, արտադրության նորարարների նվաճումները: Այդ նպատակի համար յուրաքանչյուր գրադարանի հանձնարարվում է կազմակերպել քարտարան կամ արկղ՝ «Առաջավորների փորձը բոլոր բանվորներին», «Առաջավորների փորձը բոլոր կուլ-

տնտեսականներին» խորագրերով, որտեղից ընթերցողները կարող են ընտրել իրենց ցանկացած գիրքը:

Գրագրարանը ահումբի հետ միասին կարող է նախապատրաստել և անցկացնել հանդիպման երեկոներ առաջավոր բանվորների կամ կոլտնտեսականների հետ, որտեղ նրանք փորձի փոխանակում կկատարեն, ունենդիրներին կհաղորդեն իրենց աշխատանքի առաջավոր մեթոդները: Երեկոյի նախապատրաստման շրջանում, ինչպես ընդունված է, օգտակար կլինի բարձրաձայն ընթերցանություններ անցկացնել զրբերից ու հողվածներից, որոնք ցուցադրում են աշխատանքի նորագույն ձևերն ու մեթոդները, հարկավոր է ցույց տալ առաջավորների ձեռք բերած անտեսական արդյունքը, այդ առթիվ ձեռնարկելով պլակատ և կազմելով համապատասխան հանձարարական գրականության ցանկեր:

Շատ գրագրարաններ հաջողությամբ կազմակերպում են բանավոր ամսագրեր կամ տեխնիկական և գյուղատնտեսական գրքերի երեկոներ, որոնց միջոցով բանվորներն ու կոլտնտեսականները տե՛ս միայն ծանոթանում են լավագույն գրականության հետ, այլև իրենք են պատմում այն մասին, թե ինչպես են գրքերը օգնել իրենց յուրացնելու արտագրությունը, խորանալու իրենց մասնագիտության մեջ և լավ օգտագործելու տեխնիկան՝ կապված աշխատանքի արտագրողականության հետ: Առաջավոր փորձի փոխանակման պրոպագանդան հետաքրքիր են անցկացնում գյուղական մի շարք գրագրարաններ: Ոչ մեծ թերթի վրա՝ նրանք տեղավորում են տվյալ առաջավորի ֆոտոնկարը և ինֆորմացիա՝ նրա աշխատանքի մասին, հետո գրում, իվարկում են այն գրքերը, որոնք օգնել են նրան հասնելու հաջողության և ցույց են տալիս, թե ինչ կարելի է կարդալ առճառարակ առաջավորների փորձի մասին այդ ընազավառում:

Ընթերցողները կենդանի հետաքրքրություն են ցուցաբերում մեր գիտնականների ձեռք բերած նվաճումների նկատմամբ: Այդ կապակցությամբ շատ գրքեր կարելի է ձեռք բերել միջդրագարանային արտոնմանտով Ալ. Մյանսիկյանի անվան Պետական գիտությունների կազմակերպության կողմից և շատ գրքեր ու ամսագրերի հողվածներ էլ կարելի է գտնել տեղում: Այդ գրականությունը, որ պետք է ներկայացնել ընթերցողներին, պատմում են Երկրի սովետական առաջին արհեստական արբանյակի, միջմայրցամաքային բալիստիկ հրթիռի, աշխարհում առաջին ատոմային սառցահալոսի ստեղծ-

ման մասին: Նրանք հանգամանորեն շարադրում են դեոֆիզիկական տարվա կապակցությամբ Արկտիկայում և Անտարկտիկայում սովետական գիտնականների կատարած արժեքավոր ուսումնասիրությունները: Գիտական այս հայտնագործությունների վերաբերյալ հետաքրքրական, մատչելի նյութերը պետք է բոլոր միջոցներով հասցնել ընթերցողների տարբեր խմբերին, միշտ աչքի առաջ ունենալով նրանց կրթական մակարդակը:

**ՍՄԿՊ XXI** համագումարի նյութերի պրոպագանդան համար գրագրարանները պետք է օգտագործեն աշխատանքի բոլոր ձևերը:

Հարկավոր է ձեռնարկել գրքային ցուցահանդեսներ հետևյալ թեմաներով: Սկզբում, համագումարի նախապատրաստման շրջանում. «Արժանավայել կերպով դիմավորենք ՍՄԿՊ XXI համագումարը» խորագրով: Համագումարից հետո անհրաժեշտ է վերակառուցել ցուցահանդեսը: «Սովետական՝ Միության Կոմունիստական պարտիայի XXI համագումարը» խորագրի տակ պետք է ամփոփվեն համագումարի որոշումները և նրա վերաբերյալ հրատարակված նյութերը: Կարելի է առանձին թեմաների շուրջը նույնպես դնել ցուցահանդեսներ, ինչպես օրինակ՝ «Մեր առողյունաբերության հզոր առաջընթացը», «Քիմիան մեծ վերափոխումների նախապահին» կամ «Քիմիայի հրաշալիքները», «Քիմիան այսօր» և այլն:

Որպեսզի ընթերցողների առաջ լայնորեն բացվեն գրագրարանի ֆոնդերը, նպատակահարմար և ուսանելի կլինի օգտվել առաջավոր գրագրարանների փորձից. հետաքրքրվել, թե այդ աշխատանքը ինչպես է կազմակերպվում հարեան գրագրարանում: Խորհուրդ է տրվում ընթերցողներին ընդառաջելու նպատակով, նրանց համար կազմակերպել բաց գրագրարակներ հետևյալ վերնագրերի տակ. «Քե՛զ, հարազատ պարտիա, այն ամենը, ինչ ստեղծված է մեր ձեռքերով»: Այդպիսի գրագրարակներում հավաքել հասարակական-քաղաքական, գիտա-մասսայական, ակնարկային, գեղարվեստական լավագույն և թարմ գրականությունը, որը բացահայտում է մեր սովետական իրականությունը, մեր առօրյան, մեր հաջողությունները: Գրքերի ընտրությունները հեշտացնելու համար կարելի է դասավորել ըստ թեմաների:

Գրագրարանում նպատակահարմար է տնկնալ գրականության առանձին բարտուրան՝ «Քիմավորենք ՍՄԿՊ XXI համագումարը» խորագրով, իսկ համագումարից հետո նույնպես վերակառուցել այդ

քարտարանը, լրացնել համագումարի ընթացքում և նրանից հետո լույս տեսած նյութերով: Պետք է նաև ձևավորել պլակատ՝ «ՍՄԿՊ XX համագումարից դեպի XXI համագումարը» խորագրով: Այդ թեմայի շուրջը անցկացնել ընթերցանություններ և գրականություն տեսություններ: Անհրաժեշտ է մեծ ուշադրություն նվիրել արտոնամենտում տարվող աշխատանքին, որտեղ ընթերցողների առանձին խմբերի համար անց են կացվում գրույցներ համագումարի նյութերի և նրան նվիրված գրքերի շուրջը: Խնամքով ու լավ պետք է պլակատները աշխատանքը գրադարանի առանձին բաժիններում: Գրքի պրոպագանդայի գործում զգալի օգնություն կարող են ցույց տալ ընթերցողների հայտնած կարծիքները իրենց կարողացած գրքերի մասին:

Արդյունաբերության և շինարարության դեկալարման վերակառուցումը է՛լ ավելի բարձրացրեց գրքի պրոպագանդայի նշանակությունը: Հատկապես մեր ռեսպուբլիկայում, Հայաստանի կոմպարտիայի դեկալարությունները աշխատավորների ձեռք բերած հաջողություններն ու նվաճումները լուսաբանելու ուղղությամբ մեծ աշխատանք ունեն կատարելու մեր գրադարանները: Այդ կապակցությամբ հարկավոր է գրադարանի ցուցահանդեսներում և քարտարաններում հատուկ տեղ հատկացնել ռեսպուբլիկայի, տվյալ շրջանի ու քաղաքի մասին եղած լավագույն գրականությունը: Անհրաժեշտ է ցուցադրել կենտրոնական, ռեսպուբլիկական ու շրջանային մամուլում լույս տեսած նյութերը, որոնք վերաբերում են արդյունաբերությանը, գյուղատնտեսությանը, կուլտուրային և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերին: Պետք է ցուցադրել նաև այն նյութերը, որոնք վերաբերում են տվյալ վայրի ընդերքի հարստությանը, նրա բնությանը, կլիմային, պատմությանն ու էկոնոմիկային: Պետք է լայնորեն պրոպագանդել ընթերցողներին գավառագիտական գրականությունը: Պարտիական ու սովետական կազմակերպություններին տեղյակ պահել այդ գրքերի մասին, որոնք գտնվում են գրադարանում: Հարկավոր է արժանի կազմել թերթերի կտրվածքներից հետևյալ վերնագրով. «Մեր շրջանը. ինչպես է դիմավորում ՍՄԿՊ XXI համագումարը»: Այստեղ պետք է հավաքել հողմածների կտրվածքներ զանազան թերթերից, ինչպես նաև փաստեր, նշումներ, հետաքրքրական տեղեկություններ ու տվյալներ, որոնք լուսաբանում են մեր ռեսպուբլի-

կայի ու այն քաղաքի ու շրջանի կուլտուրական կյանքը, ուր գտնվում է տվյալ գրադարանը:

Պարտիայի առաջիկա համագումարի պատվին աշխատավորների կողմից ծավալված սոցմրցման մասին անհրաժեշտ է տեղյակ պահել ընթերցողներին, որի համար կարելի է պատրաստել բյուլետեն կամ արժամ այդ մրցության ընթացքը լուսաբանելու համար: Այդ արժամը կարելի է վերնագրել այսպես. «Մեր աշխատանքային նվերները պարտիայի համագումարին»:

Համագումարի նախապատրաստման շրջանում մեծ աշխատանք պետք է տանել նաև երիտասարդ բանվորների և կուլտուրականների, մեր պանծայի երիտասարդության հետ, որոնք կոմունիստական հասարակարգի ակտիվ կառուցողներն են հանդիսանում: Մեր սովետական երիտասարդության ոսկե ձեռներով կառուցվում են բազմաթիվ գործարաններ, շենքեր, հանքահորեր, դամալին վառարաններ, քաղաքներ ու ավաններ: Երիտասարդության հայրենասիրական աշխատանքի շնորհիվ յուրացվեցին միլիոնավոր հեկտար խամ ու խոպան հողեր:

Դեռևս ավելի մեծ գործեր կան առջևում կատարելու կոմերիտականների ու երիտասարդության կողմից, որոնք սովետական ամբողջ ժողովրդի հետ միասին ընդգրկված են կոմունիստական շինարարության յոթնամյա հռչակապ պլանի կենսագործման աշխատանքներում, որը պետք է հաստատի ՍՄԿՊ XXI համագումարը: Այս գործում իր պատվավոր տեղն ունի Հայաստանի կենինյան կոմերիտմիությունը, որի կատարած անհրաժեշտություններին նույնպես պետք է պատշաճ տեղ հատկացնել: Այս մեծ ու հռչակապ խնդիրները իրագործելու համար երիտասարդ սերունդը պետք է վերցնի այն լավագույնը, ինչ կատարված է մեր ժողովրդի կողմից: Երիտասարդ բանվորներին ու կուլտուրականներին հարկավոր է հանձնարարել ոչ մեծ և մատչելի գրականություն: Ինչպես օրինակ, վ. Ի. Լենինի երկերը մեր երկրում սոցիալիզմի կառուցման մասին, բանվոր դասակարգի լավագույն մարդկանց մասին, ինչպես նաև կոմերիտմիության երրորդ համագումարում Լենինի արտասանած պատմական ճառը, որտեղ մեծ առաջնորդի կողմից պատգամներ են տրված երիտասարդությանը: Անհրաժեշտ է այդ ամենը հասցնել երիտասարդ ընթերցողներին, այդ աշխատությունները հանձնարարել յուրաքանչյուրին: Երիտասարդ ընթերցողներին պետք է ծանո-

Ֆացնել նաև այն գրականության հետ, որոնք բացահայտում են բանվոր դասակարգի բարձր բարոյական կերպարը, որտեղ պատմելով է կոմերիտականների, նրիտասարդության աշխատանքային և մարտական հերոսությունների մասին, սոցիալիզմի մյուս երկրների սխրագործությունների մասին, որոնք սոցիալիզմ են կառուցում: Այս ամենը պետք է սեղանի գիրք դառնա, ուսումնասիրության աղբյուր մեր յուրաքանչյուր պատանու և աղջկա համար: Գրադարանավարները պետք է ակտիվ կերպով մասնակից դարձնեն երիտասարդ բանվորներին և կոլտնտեսականներին՝ ընթերցողական կոնֆերանսներին, արտագրության առաջավորների հանդիպման և գրքի քննարկման երեկոներին: Նրանց հետ պետք է գրականության ընթերցանություններ, զրույցներ անցկացնել երիտասարդության կյանքը պատկերող լավագույն գրքերի շուրջը: Կարևոր է ցուցահանդեսներ կազմակերպել, սլակատներ, ալբոմներ՝ պատրաստել, թերթերի կտրվածքներից թղթապանակներ սարքել՝ «Նեկրի պատանեկությունը հարազատ պարտիային», «Որտեղ երիտասարդությունն է աշխատում, այնտեղ ամեն ինչ կստացվի» թեմաներով:

Երիտասարդության հետ տարվող աշխատանքում մեծ օգնություն կարող է ցույց տալ Ա. Մյանսիկյանի անվան Պետական ռեսպուբլիկական գրադարանի կողմից հրատարակված «Լենինյան կոմերիտմիության 40-ամյակը» նյութերի ժողովածուն և նրա ֆոնդերում գտնվող հարուստ գրականությունը, որից պետք է օգտվի յուրաքանչյուր գրադարան:

«ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թվականների կոնտրոլ թվերը», որը հրապարակված է մամուլում և առանձին գրքով, ամենուրեք գտնվում է լայն հասարակայնության ուշադրության կենտրոնում: Առաջիկա յոթնամյակում ժողովրդական տնտեսության զարգացման պարտիայի ծրագիրը ընկեր երուշտվը անվանեց մեր երկրում կոմունիստական շինարարության փառապանծ ծրագիր: Սովետական մարդիկ թեալովրված են վաղվա պայծառ հեռանկարներով, իանդավառված այդ հոյակապ նախագծումները կենսագործելու համար:

Մեր մեծ հայրենիքի բոլոր եղբայրական ռեսպուբլիկաների շարքում, առաջիկա յոթ տարիների ընթացքում հետագա հուժկու զարգացում կապրի նաև մեր ռեսպուբլիկայի՝ Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսությունը:

Հայկական ՍՍՌ-ում նախատեսված է քիմիական արդյունաբերության հետագա զարգացում՝ բնական դաշի օգտագործման հիման վրա, ճշգրիտ մեքենաշինության ու սարքաշինության, ինչպես նաև սննդի ու թեթև արդյունաբերության զարգացում, էներգետիկ բազայի ամրապնդում:

Յոթնամյակում կապիտալ ներդրումների ծավալը ռեսպուբլիկայում կկազմի 12 միլիարդ ռուբլի՝ 2,2 անգամ շատ, քան 1952—1958 թվականներին: Արդյունաբերության համախառն արտադրանքը կաճի մոտավորապես 2,2 անգամ:

Ռեսպուբլիկայի էներգետիկ բազան ուժեղացնելու համար նախատեսվում է կառուցել և դործարկել բնական գազով աշխատող երկու էլեկտրակայան, ինչպես և ավարտել երկու հիդրոէլեկտրակայանների կառուցումը:

Գյուղատնտեսության ասպարեզում նախատեսվում է 1965 թվականին 1957 թվականի համեմատությամբ խաղողի արտադրությունն ավելացնել մոտավորապես 2,9 անգամ, պտուղների՝ 3, ծխախոտին՝ 1,4, թթենու շերամի բոժոժին՝ 1,7, մսին՝ 2,1, կաթին, 1,8 անգամ: Խաղողի և պտղատու այգիների տարածությունը կավելանա 44 հազար հեկտարով, զգալիորեն կընդլայնվի բարձրորակ գինիների ու կոնյակների արտադրությունը:

Մեր ռեսպուբլիկայի աշխատավորները, այդ թվում և կոմերիտականներն ու երիտասարդները պատրաստ են անձնվեր հայրենասիրական աշխատանքով իրենց ավանդը ներդնել այդ մեծագույն խնդիրների կատարման, կոմունիզմի կառուցման հոյակապ ծրագրի կենսագործման վեհ պայքարում:

Այդ մեծ նախագծումների ծրագիրը աշխատավորությանը հասցնելու գործում այս մեթոդական նամակից օգտվելու հետ միասին, մեր գրադարանային աշխատողները պետք է ուշադիր հետևեն մամուլին և նոր լույս տեսնող գրականությունը, իրենց ձեռնարկումները հարստացնելով թարմ նյութերով ու տվյալներով, իրենց աշխատանքը դարձնելով ավելի բազմազան:

Այսպես օրինակ, հարկավոր է լայնորեն իլյուստրացիայի ենթարկել և պրոպագանդել «Կոմունիստական հասարակարգի ծավալուն կառուցման ծրագիրը» խորագիրը կրող «Պրավդայի» նոյեմբերի 17-ի առաջնորդողում բարձրացված հարցերը («Սովետական Հայաստան», 1958, 18 նոյեմբերի), հմտորեն օգտագործել թվական

տվյալները և բոլոր մյուս փաստերը, կազմել դիագնոստիկաներ, պլակատներ, ցուցափեղկեր, քաղվածքներ և այլն: Այդ տվյալները պետք է տեղին օգտագործել նաև կենդանի զրույցների, բարձրաձայն ընթերցանությունների, երեկոների կազմակերպման ժամանակ:

Հատկապես առանձին ուշադրություն պետք է նվիրել ՍՍՌՄ տնտեսական և կուլտուրական շինարարության արդյունքների, Սովետական Միության ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թվականների հիմնական խնդիրների՝ արդյունաբերության, ծանր ինդուստրիայի, ժողովրդական սպառման ապրանքների արտադրության, սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման, կապիտալ ներդրումների, սովետական ժողովրդի բարեկեցության աճի, կոմունիստական դատարարական և մյուս հարցերի վրա:

Համագումարի աշխատանքներն ավարտելուց հետո, երբ արդեն բոլոր հիմնական նյութերը կգտնվեն ձեռքի տակ, ՀՍՄՍ Ա. Մյասնիկյանի անվան Պետական գրադարանը կհրատարակի և տեղերը կուղարկի «ՍՄԿՊ XXI համագումարի որոշումների և նյութերի պրոպագանդան գրադարաններում»—մեթոդական ժողովածու, որը զգալի օգնություն կլինի մեր գրադարանների համար նրանց առօրյա աշխատանքում:



